## Ուսումնական նախագծի պլան

Դասարան՝ 7-րդ Բ-,Գ

Թեմա Անտեսանելի հողագործներ՝ անձրևորդեր

Ղեկավար Հասմիկ Թովմասյան

| | | | |
|---|---|---|---|
| Նախագծի սկիզԲ | 1. | Նախագծի անունը (անվանումը) Անտեսանելի հողագործներ՝ անձրևորդեր | |
| | 2. | Հիմնահարցը (հիմնախնդիրը)<br>1. Անձրևորդերի դերը հողագոյացման մեջ:<br>2. Սովորողների տեսական և գործնական գիտելիքների կարողությունների զարգացում: | |
| | 3. | Նպատակը (ները) | Սովորողների մոտ ձևավորել հետազոտություն իրականացնելու և տեղեկություններ հավաքագրելու հմտություններ<br>Զարգացնել սովորողների վերլուծելու, եզրակացություններ անելու կարողությունները և քննական մտածողությունը<br>Բնության կարևորում, անհատականնխմբայինհետազոտականաշխատանքիձևավորում:<br>Համագործակցություն (սերտ համագործակցության ապահովում դասավանդողսովորողհամակարգում),խնդիրների վերհանում և քննարկում: |

| | | |
|---|---|---|
| | | |
| 4. | Տևողությունը | 6 շաբաթ |
| 5. | Ժամաքանակ | 6ժամ |
| 6. | Ձևաչափը | թիմային |
| 7. | Տեսակը | ներառարկայական |
| 8. | Կարողունակություններ | Սովորել սովորելու կարողունակություն<br>Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն<br>Լեզվական գրագիտություն և կարողունակություն<br>Մշակութային կարողունակություն |
| 9. | Կապը ՀՊՉ առարկայական ծրագրի վերջնարդյունքների հետ | Կ7-ՄՕ-ԿՖ.2, Կ7-Էկ-Կ.1, Կ7-Էկ-Բպ.1, Կ7-Էկ-Բպ.2 |
| 10. | Խնդիրները | Ուղղորդել սովորողներին, տրամադրել ինֆորմացիայի աղբյուրներ<br>Հետևել, որ սովորողները համագործակցեն, բայց նաև աշխատեն ինքնուրույն,<br>հաճախակի քննարկել տարվող աշխատանքների ընթացքը և արդյունքները,<br>հետևել ժամանակացույցին |

| | | | |
|---|---|---|---|
| | | | |
| | 11. | Վերջնարդյունքներ | Համակարգել տեսական նյութերը գործնական աշխատանքների հետ:<br>Մեթոդաբանական սկզբունքները և հնարքները փորձարկել՝ հիմքում ունենալով անհատական ու խմբային առաջընթացի պարբերական արձանագրումը:<br>Հավաքագրած տեղեկությունները վերլուծել, մշակել և հրապարակել:<br>Աշխատանքների ներկայացման միջոցներ՝<br>Գործնական աշխատանք<br>Պաստառ |
| | 12. | Աշխատանքային խմբեր | **1- 2.** Գևորգյան Սուսաննա, Թամոյան Շիկո |
| | | | **3 -4.** Կիրակոսյան Հռիփսիմե, Համբարձումյան Անուշ |
| | | | **5 - 6-7.** Մինասյան Ավետ, Օգմանյան Ռուզաննա ,Մանուկյան Արթուր |
| | | | **8-9-10.** Եղոյան Հասմիկ, Հովհաննիսյան Մարինե , Ղազարյան Թամարա |
| | | | |
| Նախ | 7. | Առաջադրանքներն ըստ խմբի | Հիմնախնդիրը ուսումնասիրում են համայնքի շրջանակում դուրս բերելով հնարավոր պատճառները:Այդ նպատակով սովորողների խմբերը կատարում են փործնական աշխատանք յուրաքանչյուրն իրենց տնամերձ հողակտորում և |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ագծի ընթացք | | | դպրոցամերձ հողամասում,որից հետո կատարում են համապատասխան բնութագրումներ | |
| | | | Հաջորդ խումբն իրականացնում է որդերի մասնատում և տեղափոխում ոչ բերրի հողով լցված սենյակային բույսերի ամաններում | |
| | | | Ամբողջացնելով ձեռք բերված ինֆորմացիան, սովորողները կատարում են եզրակացություններ | |
| | | | Հավաքագրած լուսանկարներից պատրաստում են նկարների շարք | |
| | | | Խմբերի կատարված աշխատանքի արդյունքները ներկայացվում են: | |
| | 8. | Ժամանակացույց | 29.02-07.03 | Կարճատև նախագծերի ծրագրում:<br>Ձևավորել խումբ, ներկայացնել թեման և հիմնախնդիրը:<br>Կատարել դերերի բաշխում, սահմանել ժամանակացույց: |
| | | | 07.03-14.03 | Իրականացնել հարցում( խորհուրդ, համացանց, գրադարան) |
| | | | 14.03-21.03 | Նախագծային աշխատանքի տեսական մասի կատարում (գրադարան, համացանց, խորհրդատվություն)<br>Հետազոտության վերաբերյալ ձեռք բերված նյութերի համակարգում: |
| | | | 04.04-11.04 | Ձեռք բերած նյութերի վերանայում, քննարկում: |
| | | | 11.04-18.04 | Ձեռք բերված նյութերի յուրացում |
| | | | 18.04-25.04 | Վերջնական արդյունքի ստեղծում. պաստառ: |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Ավարտական աշխատանքի դիտում, քննարկում:<br><br>Ավարտական նախագծի արդյունքների ներկայացում: |
| Ն<br>ա<br>խ<br>ա<br>գ<br>ծ<br>ի<br>ա<br>վ<br>ա<br>ր<br>տ | 9. | Գնահատում | Անհատական և խմբային գնահատում (ռուբրիկներ,)<br><br>Գնահատում իրականացնել նախագծի ամբողջ ընթացքում, գնահատել սովորողների ինքնուրույն աշխատանքները և նախագիծը որպես մեկ ամբողջություն: |
| | | | Արդյունքների գնահատում<br><br>Արդյունքները գնահատել նախօրոք կազմված և սովորողներին ներկայացրած ռուբրիկով: Առանձին գնահատել նախագծի՝<br><br>Ընթացքը<br><br>Բովանդակությունը<br><br>Ներկայացումը |

| Միավորներ Չափանիշներ | 1-3 | 4-6 | 7-8 | 9-10 |
| --- | --- | --- | --- | --- |
| Բովանդակություն | Ուսումնասիրությունները չեն առնչվում հիմնախնդրին: Բացակայում են նյութի շարադրման տրամաբանական հաջորդականությունը: Առկա են սխալներ: | Ուսումնասիրությունները մասամբ են առնչվում հիմնախնդրին: Նյութի շարադրանքը ինչ-որ չափով տրամաբանական է,սակայն առանձին հարցեր անհասկանալի են: | Ուսումնասիրություններն առնչվում են հիմնախնդրին: Նյութի շարադրանքը տրամա- բանական է, առանձին բաղկացուցիչ մասերը փոխլրացնում են իրար: | Ուսումնասիրությունները լիարժեք արտացոլում են հիմնարար հարցերն Նախագծի բովանդակությունը հասկանալի է, տրամաբանորեն շարադրված ընկալելի: |
| Ինքնատիպություն | Նյութերը ներկայացվում են առանց որոշակի մշակման, սահմանափակ քանակի միաբնույթ տեղեկատվականաղբյուրների հիման վրա: | Նյութերը ներկայացվում են միօրինակ: Առկա են տարբեր տեղեկատվականաղբյուրներ: | Նյութերը բազմազանեն, ներկայացվում են հետաքրքիր մոտեցմամբ: Առկա են հեղինակային գաղափարներ: Ներառված է մեծածավալ տեղեկատվություն տարբեր աղբյուրներից: | Նյութերը բազմազան են, ներկայացվում են յուրօրինակմոտեցմամբ: Աշխատանքն աչքի է ընկնում առանձնահատուկ գաղափարներով, տեղեկատվությունը հավաքագրված է տարաբնույթ աղբյուրներից, և ստեղծագործաբար վերլուծված է: |
| Մուլտիմեդիայի օգտագործում | Նյութերում բացակայումեն մեդիա աղբյուրներ, մուլտիմեդիոն նյութեր, հղումներ: | Նյութերում օգտագործված են մեկ- երկու տեղեկատվության աղբյուր՝ իրենց հղումներով, մեկ- երկու մուլտիմեդիոն նյութեր,որոնց ներկայացումը սակայն համակարգված չեն: | Նյութերում օգտագործվածեն մեդիա աղբյուրներ իրենց հղումներով, մեդիանյութեր՝ գծապատկերներ, դիագրամներ, ծաղրա- նկարներ, նկարներ, տեսանյութեր, ձայնագրու- թյուններ: Կիրառված մուլտիմեդիոն տարրերը ոչ միշտ են հասկանալի դարձնում հարցերի ընկալումը: | Նյութերում օգտագործված են մեդիա աղբյուրներ իրենց հղումներով, մեդիա նյութեր՝ գծապատկերներ, դիագրամներ, ծաղրանկարներ, նկարներ, անիմացիաներ, տեսա- նյութեր, վիճակագրական տվյալներ, սոց. հարցումներ ձայնագրություններ: Մուլտիմեդիոն տարրերը ընդգծում են նյութի բովանդակային մասը և հասկանալի դարձնում բարդ հարցերի ընկալումը; |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ներկայացման բանավոր խոսք | Աշխատանքի արդյունքները ներկայացնում են ոչ հստակ: Խոսքը կցկտուր է, ոչ լիարժեք: | Ներկայացնում են աշխատանքի արդյունքները մասամբ,Մասամբ տիրապետում են ներկայացվող նյութին: Խոսքը սահուն է, սակայն բացակայում են հիմնավորումները: | Լիարժեք ներկայացնում են աշխատանքի բովանդակությունն ու արդյունքները: Թեմայի վերաբերյալ ներկայացնում են լրացուցիչ տեղեկատվություն: Խոսքը սահուն է, համոզիչ, առկա են հույզեր: | Լիարժեք ներկայացնում են աշխատանքի բովանդակությունն ու հիմնականդրույթները: Նյութը ներկայացնում են լիարժեք և բազմակողմանի: Խոսքը սահուն է, համոզիչ, փաստարկված, պատկերավոր և հուզականորեն հագեցած: |
| Գրաֆիկական ձևավորում | Աշխատանքը ներկայացված է պարզ շարադրանքի տեսքով: Մեծ ուշադրություն է դարձվել ցուցադրական նյութերին, ինչը խանգարում է բովանդակության ընկալմանը: | Աշխատանքը ներկայացված է շարադրանքի տեսքով, առկա է նմեկ-երկու մեդիա նյութեր: Գրաֆիկական և մուլտիմեդիոն բաղադրիչները չեն խանգարում բովանդակության ընկալմանը, բայց ոչ միշտ են ճիշտ իրագործված, անհամաչափ են, չկա ընդհանուր ոճ: | Աշխատանքը ներկայացված է համակարգված, հստակ տեսանելի են հիմնական գաղափարներն ու դրույթները: Ձևավորման և բովանդակային տարրերը լրացնում են միմյանց: | Աշխատանքը ներկայացված է համակարգված, մատչելի և հստակ տեսանելի են հիմնական գաղափարներն ու դրույթները: Մանկավարժական տեսակետից ձևավորման և բովանդակային տարրերը կազմում են մեկ ամբողջություն: |
| Խմբային աշխատանք | Խմբում աշխատանքային պարտականությունները չեն բաժանվել և որոշ անդամներ ընդհանրապես չեն ընդգրկվել աշխատանքներին: Գործնականում խմբային աշխատանք չի իրականացվել: | Խմբի անդամների մեծ մասը մասնակցել է աշխատանքներին, բայց ծանրաբեռնվածությունը նրանց միջև անհավասարաչափ է բաշխվել: | Խմբի անդամների մեծ մասն իրենց ներդրումն ունեն ընդհանուր գործի մեջ: | Աշխատանքներին հավասարապես մասնակցել են խմբի բոլոր անդամները: |

| Աշակերտ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Գևորգյան Սուսաննա | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 |
| Թամոյան Շիկո | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Հովհաննիսյան Մարինե | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 |
| Կիրակոսյան Հռիփսիմե | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 |
| Համբարձումյան Անուշ | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 |
| Մինասյան Ավետ | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 |
| Օզմանյան Ռուզաննա | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 |
| Մանուկյան Արթուր | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 |
| Եղոյան Հասմիկ | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 |
| Ղազարյան Թամարա | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 |

Ուսումնական նախագծի հաշվետվություն

Դասարան՝ 7-րդ Բ, Գ

Թեմա՝Անտեսանելի հողագործներ՝ անձրևորդեր

Ղեկավար՝Հասմիկ Թովմասյան

Ուսումնական նախագծի շրջանակներում սովորողները ուսումնասիրեցին տարբեր հողակտորներ, հավաքեցին անձրևորդեր՝ առնչվելով առկա բնապահպանական խնդիրներին:

Աշխատանքի ընթացքում սովորողների մոտ ձևավորվեցին հետազոտություններ իրականացնելու և տեղեկություններ հավաքագրելու, վերլուծելու, եզրակացություններ կատարելու կարողունակություններ:

Հավաքագրած տեղեկությունների և հետազոտությունների արդյունքում սովորողները ոչ բերրի հողը անձրևորդերի օգնությամբ դարձրին բերրի և այդ հողում աճեցրին բույսեր, որոնք ցուցադրվեցին գործնական աշխատանքի տեսքով և ցուցապաստառով: Աշխատանքն ընդլայնեց սովորողների մոտ գիտելիքներ որպեսզի զերծ մնան քիմիական նյութերով հողը հարստացնելուց՝ ավելի շատ կիրառելով օրգանական պարարտանյութեր: Ուսումնասիրությունների արդյունքում հավաքագրված տեղեկությունները ներկայացվեցին սովորողների կողմից:

Արդյունքների գնահատումը կատարվեց նախագծի իրականացման ընթացքում՝ նախօրոք կազմված գնահատման ռուբրիկով: